Կոնդակ Սուրմալուայ գործակալ Սիոն քահանայ Տէր-Դանիէլեանի անունով, որով, Երևանի փոխ-թեմակալի միջնորդութեան համաձայն, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 4 հոկտեմբերի, թ. 1536։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ԲԱՂՈՒԱԾՆԵՐ

1 յուլիսի, թ. 351. Սինօդը Երևանի Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Էջմիածնի գաւ. Գիւլլուջա գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր Մինասեանին և առաջադրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի համար։

3 յուլիսի, թ. 360. Սինօդը՝ ի նկատի ունենալով, որ Աղէքսանդրապոլի վիճակի փոխանորդ չլինելու պատճառով Հոգ. Կառավարութեան նախագահութիւնը վարում է Յակով քհնյ. Խաչվանքեանը, որոշեց. Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, թոյլ տալ Աղէքսանդրապոլի Հ. Կառավարութեան վճարել Խաչվանքեան քահանային նախագահութեան համար տարեկան երեք հարիւր վաթսուն ռուբլի, սկսած այս տարուայ յուլիսի 1-ից։

6 յուլիսի, թ. 361. Սինօդը Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նրան վիճակային արդիւնքից ծախսել 500 ռուբլի և նորոգել առաջնորդարանի շէնքը՝ Շուշու թեմական դպրանոցի 75-ամեայ յոբելեանի առթիւ եկող պատուաւոր հիւրերի ընդունելութեան համար։

8 յուլիսի, թ. 365. Սինօդը Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. Դանձակի նահանգապետի հաճութիւնն ստանալուց յետոյ թոյլ տալ Երևանի կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Զանգեզուրի գաւառի ճակատէն գիւղի բնակիչ Արզումանի Ղա-

բախանեանին և առաջադրել փոխ-թեմական ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ։

12 յուլիսի, թ. 376. Մինչդր լսելով Ներքին Գործոց պ. Նախարարի անցած յունիսի 12-ի, № 5773 առաջադրութիւնը, որով յայտնում է, թէ Թագաւոր Կայսրը նոյն յուլիսի 8-ին բարձրագոյնս բարեհաճեց թոյլ տալ հայ-լուսաւորչական եկեղեցի շինել Քիշնևի Հայոց գերեզմանատանը, որոշեց. պատուիրել Բեսսարաբիայի Կոնսիստորիային կարգադրել կառուցանել հայ-լուսաւորչական եկեղեցի Քիշնևի Հայոց գերեզմանատանը՝ հաստատուած յատակագծի համեմատ։

12 յուլիսի, թ. 378. Մինչդը՝ համաձայն Երևանի Կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. թոյլ տալ Գորիս քաղաքի ծխական հոգաբարձութեան վերանորոգել եկեղեցու տանիքը, ծախսելով ներկայացրած նախահաշուի համաձայն 633 ռուբլի։

15 յուլիսի, թ. 384. Մինչդը՝ Վրաստանի Հ. Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ յիշեալ Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Սոչիի շրջանի Միխիլրիփշ գիւղի բնակիչ Կարապետ Սէֆէրեանին և պատուիրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի համար։

15 յուլիսի, թ. 385. Մինչդը՝ ստանալով Հոգևոր Գործերի դեպարտամենտի այս տարուայ մայիսի 26-ի, № 6448 գրութեան հետ ուղարկած զինուորական նախարարի հաստատած կանոնները՝ կամաւոր զինուոր ընդունելու կարգի մասին, որոշեց. տպագրութեան յանձնելով այդ կանոնների բնագիրը և թարգմանութիւնը, ուղարկել բոլոր Կոնսիստորիաներին, Մայր Աթոռի հոգ. ձեմարանի և 4 թեմական դպրոցների վարչութիւններին ի հրահանգութիւն։

17 յուլիսի, թ. 386. Մինչդը՝ Երևանի փոխ-թեմական միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ Երևանի

Կոնսիստորիային Ալեքսանդրոպոլի Հոգևոր Կառավարութեան և կալուածոյ կառավարչի ձեռքով կատարել տեղի յաջորդարանի վերանորոգութիւնը, ծախսելով վիճակային արդիւնքից 602 ռ. 90 կոպ. և կատարածի մասին մանրամասն հաշուետուութեամբ տեղեկացնել Սինոդին։

17 յուլիսի, թ. 388. Սինոդը՝ համաձայն Երևանի Կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. թոյլ տալ Էջմիածնի գաւ. թափադիպի գիւղի ծխականներին վերանորոգել իրենց եկեղեցին, ծախսելով եկեղեցապատկան գումարից 500 ռ.։

17 յուլիսի, 389. Սինոդը՝ համաձայն Երևանի Կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. Երևանի պ. Նահանգապետի հաճութիւնն ստանալուց յետոյ թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ալեքսանդրոպոլի գաւ. Ղէյղաճ գիւղի բնակիչ Ալեքսանդր Տէր Մինասեանին և պատուիրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վերայ։

17 յուլիսի թ. 390. Սինոդը՝ Երևանի Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Երևանի գաւառի Ներքին-Դարղալու գիւղի բնակիչ Արմենակ Ղարիբջանեանին, և պատուիրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի համար։

24 յուլիսի, թ. 403. Սինոդը՝ ստանալով Բաթումի Երբջանային Վարչութեան կողմից հաստատուած Սաթլէթ գիւղի եկեղեցու նորոգութեան նախահաշիւն ու յատակագիծը, որոշեց. ուղարկել Սաթլէթ գիւղի եկեղեցու նորոգութեան յատակագիծն ու նախահաշիւը Վրաստանի թեմի Առաջնորդին և պատուիրել անել անհրաժեշտ կարգադրութիւն եկեղեցու նորոգութեան մասին և շտապեցնել ինչպէս եկեղեցու նորոգութեան այնպէս և դպրոցի շինութեան օգտին կատարուելիք նուիրատուութեան խնդիրը։

24 յուլիսի, թ. 404. Մինոգը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի յայտարարութիւնն այն մասին, թէ Ղազախի գաւառի Թալա գիւղի Խաչատուր քահանայ Տէր Յարութիւնեանցը՝ առողջ լինելով, կարող է կատարել իւր քահանայական պարտականութիւնները, որոշեց. առանց հետևանքի թողնել նոյն Կոնսիստորիայի նախկին միջնորդութիւնը Գէորգ Ա. յտինեանցին յիշեալ քահանայի տեղ Թալա գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու մասին։

26 յուլիսի, թ. 406. Մինոգը՝ Վրաստանի թեմի Առաջնորդի միջոցով ստանալով Հ. Նախիջևանի Հանդամէջ գիւղի բնակիչ Հանգուցեալ Գէորգ Զոհրաբեանի նոյն գիւղի եկեղեցու օգտին կտակած 500 ռուբլին, որոշեց. կտակած գումարն ուղարկել Երևանի Կոնսիստորիային և պատուիրել կարգադրել մուծել այդ գումարը եկեղեցու մատեանը, ապահով պահել գործադրել և կտակարարի կամքի ճիշտ իմաստի համաձայն։

6 օգոստ. թ. 424. Մինոգը Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ Թէլաւեցի Միքայէլ Դաւթեանի և Սոնա Եարալեանցի պսակը աղգականութեան 6-րդ աստիճանում հանդերձ խորթութեամբ։

6 օգոստ., թ. 425. Մինոգը՝ ի նկատի ունենալով, որ Բագուի մօտ գտնուած Սաբունչի գիւղում կառուցանելի ս. Սահակ և Մեսրոպ եկեղեցու շինութեան համար պատրաստի կայ 1500) ռուբլի և յատակագիծն էլ հաստատուած է, որոշեց. յայտնել Տ. Փոխարքայի գիւանատանը, ի հետևումն մարտի 11-ի, № 7138 գրութեան, որ Մինոգի կողմից արգելք չկայ եկեղեցու շինութեան։

6 օգոստ., թ. 426. Մինոգը Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. պատուիրել նոյն կոնսիստորիային կարգադրել տալ Անիի վանահօրը տարեկան մի հարիւր յիսուն և վեց ռուբլի մինչև այժմ տրուող պտղի արդիւնքի փոխարէն։

16 օգոստ., թ. 432. Մինոգը Երևանի կոնսիստորիայի

միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Էջմ. դաւառի Բիւրական գիւղի բնակիչ Ենոք Տէր-Նիկողոսեանին և առաջադրել փոխ-թեմակալին ձեռնադրել նրան քահանայ նոյն դաւառի Վերին-Այլանլու գիւղի վերայ։

23 օգոստ., թ. 441. Սինոդը Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Բորչալուի դաւառի Ղզլբիլիսա գիւղի բնակիչ Իգնատիոս Ոսկանեանցին և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի համար։

23 օգոստ., թ. 442. Սինոդը մարմնաւոր իշխանութիւնից պատշաճաւոր թոյլտուութիւն ստանալով, որոշեց. պատուիրել Վրաստանի կոնսիստորիային կարգադրել ընդունել Սղնախ քաղաքի բնակիչ Նիկողայոս Ցարութիւնեանի կտակած տունը Զաքաթալայի ս. Գէորգ եկեղեցու օգտին, և հսկել, որ զոյքը ճնայ անձեռնմխելի, իսկ եկամուտից եկեղ. ծխական հոգաբարձութեան ձեռքով, համաձայն կտակարարի կամքի, օգտուեն Զաքաթալի աղքատ բնակիչների աշակերտ երեխաները, որոնցից տարեկան մէկը պէտք է ընտրուի վիճակով թոշակաւոր 9 տարի ժամանակով։

28 օգոստ., թ. 445. Սինոդը՝ լսելով Մ. Աթոռի Վանական Կառավարութեան օգոստոսի 5-ի, № 342 յայտարարութիւնը Մ. Աթոռի անտառը պարսպապատելու մասին, և գտնելով անհրաժեշտ անտառը պարսպով շրջապատելը, որոշեց պատուիրել նոյն կառավարութեան՝ ներկայացրած նախահաշուի համաձայն պարսպապատել անտառը՝ ծախսելով մօտաւորապէս 4000 ռուբլի։

28 օգոստ., թ. 446. Սինոդը՝ լսելով Վարշաւայի բնակչուհի կաթոլիկ Եւգենիա Լիսովսկու խնդիրը՝ նրան հայ եկեղեցու ծիսով պսակուելու իրաւունք տալու վերաբերմամբ, որոշեց. բացատրել Աստրախանի կոնսիստորիային, որ թէև յիշեալ Լիսովսկու ամուսինը դատապարտուած է

տաժանակիր աշխատանքների և զրկուած է բոլոր իրաւունքներից, այնուամենայնիւ Օր. X հտ. 1 մ. 20 և 62 յօդուածների զօրութեամբ նոցա պսակը մնում է իւր զօրութեան մէջ, որովհետև այդ պսակը կատարող կաթոլիկ հոգևոր իշխանութիւնը չի համարում լուծուած այն, հետևապէս և Ե. Լիսովսկուն չի կարելի թոյլ տալ պսակուել հայ-լուսաւորչականի հետ հայ եկեղեցու ծիսով։

30 օգոստ., թ. 447. Մինչդը Երևանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ Նախիջևանի գաւառի Ա.յլապատ գիւղի ծխականներին նորոգել իրենց եկեղեցին, ծախսելով ըստ ներկայացրած նախահաշուի 307 ռուբլի։